ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 9-ին ժամը 16:37 քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0 հասցեում ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից սահմանած օրակարգով և ժամկետում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 24 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Սմբատյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ ընտրված Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից 2025 թվականի մայիսի 27-ին ներկայացրած ավագանու անդամի՝ միաժամանակ համայնքի ղեկավարի պաշտոնից հրաժարականի դիմումի վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կազմված արձանագրությունը ներկայացվել է թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Հանձնաժողովի 31.05.2025թ. «Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ ընտրված և լիազորությունները դադարած ավագանու անդամի մանդատը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկանծուին տալու» թիվ 14 արձանագրության համաձայն Դիանա Մնացականի Գասպարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարել են և մանդատը տրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Լևոն Խաչիկի Խաչատրյանին:

Ավագանու արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և դրանց կցված փաստաթղթերը ձևավորվել են ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց օրակարգը հաստատել առանց օրակարգի 11-րդ հարցի, իսկ ավագանու անդամ Էդվարդ Ափոյանը առաջարկեց հանել նաև 10-րդ հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի հունիսի 9-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 9 «ԱԻԴԱ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 65-Լ որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 66-Լ որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հողամասը Վաղարշապատ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությաբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 67-Ա որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հողամասը Վաղարշապատ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությաբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 68-Ա որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հողամասը Վաղարշապատ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 69-Ա որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հողամասը Վաղարշապատ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 70-Ա որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հողամասը Վաղարշապատ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեցին ավագանու անդամներ Սևակ Խաչատրյանը:

Սևակ Խաչատրյան հարցրեց.

- Ընդլայնում տրվելո՞ւ է 700 քմ մակերեսով հողամաս:

Արսեն Պետրոսյան պատասխանեց.

- Այո:

Միեր Մկրտչյանը պարզաբանեց, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասը ավելի շատ է, ինչպես նաև զավթած հողամասը 700 քմ մակերեսից է ավել:

Սևակ Խաչատրյանը հարցրեց.

- Արդյո՞ք հետագայում մնացած մասն էլ է տրվելու ընդլայնում:

Միեր Մկրտչյանը պատասխանեց.

- Ոչ, օրենքը թույլ է տալիս ընդլայնում տալ միայն մեկ անգամ:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 21
դեմ – 0
ձեռնպահ – 3

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությաբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 71-Ա որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 72-Ա որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանն անհատույց օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 73-Ա որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեցին ավագանու անդամներ Արմեն Դավթյանը:

Արմեն Դավթյանը հարցրեց.

- 1.6 հա բաժանվելու է առանձին մասերի, թե՞ ամբողջական կտորով է լինելու և արդյո՞ք այդ հողամասը համայնքային սեփականություն է:

Միհեր Մկրտչյանը պատասխանեց.

- Հետագայում այդ հողամասը բաժանվելու է մասերի և կառուցվելու է թաղամաս, իսկ հողամասը անհատի է:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 4

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 74-Ա որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու ժամկետ սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեցին ավագանու անդամներ Սևակ Խաչատրյանը:

Սևակ Խաչատրյան հարցրեց.

- Կարո՞ղ ենք օրը փոփոխել:

Արսեն Պետրոսյանը պատասխանեց.

- Ոչ:

Իրավաբանական բաժնի պետ Կարինե Եսայանը պարզաբանեց՝ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարելուց հետո մեկ ամսվա ընթացքում պետք է կատարվի համայնքի ղեկավարի ընտրություն, իսկ ընտրության օրը նշանակման պահից հետո 2 շաբաթվա ընթացքում:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17

դեմ – 7

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 75-Ա որոշումը:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի հունիսի 9-ին ժամը 17:24-ին:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: